

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՑԱԻԵՐԻՑ

Փրկիչը շատ որոշ և պարզ գծեց ամուսնական օրէնքն ու ընտանեկան կապը՝ «Իսկզբանէ արարածոց արու և էգ արար զնոսա Աստուած և ասէ. վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ: Եւ եղիցին երկուքն ի մարմին մի և այնուհետեւ ոչ են երկու, այլ մարմին մի: Արդ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեացէ: Եթէ այր արձակեացէ զկին իւր և արացէ այլ՝ չնայ: Եւ կինն եթէ ելցէ յառնէ իւրմէ և եղիցի առն այլում՝ չնայ: Եւ որ զարձակեալն առնէ չնայ»: Սա Աստուածադիր օրէնքն է՝ մի անգամ՝ զուգաւորութիւնից յետոյ արդէն երկուսը մի մարմին են և ոչ ոք իրաւունք չունի մեկնելու, իրարից բաժանելու: Միայն այդ տեսակ կապն է, որ արժանաւորապէս իրաւունք ունի քրիստոնէական ամուսնութիւն կոչուելու և եկեղեցու օրհնութիւնը ժառանգելու: Ահա այդ օրէնքն է (խորհուրդ), որ Փրկիչն աւանդեց մեզ և նրանից շեղուելը «չնութիւն» կոչեց իսկապէս:

Յիսուսի առաքեալներն, երբ առաջին հաւատացեալներին քարոզեցին իրենց ուսած կեանքի սկզբունքները, երբ ստացած օրէնքները կեանքի և հաւատոյ հանգանակ դարձրին և հաստատեցին ամուսնութեան կարգը (ամուսնութեան խորհուրդը), ի նկատի ունէին, որ առանց այդ սկզբունքներն ի կատար ածելու, առանց յաւիտենական կեանքի և ընդհանուր եղբայրութեան գաղափարը մարմնացնելու՝ մարդիկ Քրիստոսի աշակերտ և հաւատացեալ չեն կարող կոչուել և այդ պատճառով որոշեցին նախ քան ամուսնական զուգաւորութիւնն, իւրաքանչիւր երի-

տասարդ զոյգին յիշեցնել Փրկչի վեհ պատգամը, բացատրել ընդհանուր եղբայրութեան ամենամեծ հիմունքներից մինը՝ ընտանիքի անդամների փոխադարձ անպայման հաւատարմութիւնն, իսկ շրջապատողների համար՝ այդ փոքրիկ միութեան սրբութիւնն և անձեռնմխելիութիւնը։ Հաւատացեալների բաղմութեան առաջ՝ օրէնքի ընթերցանութեամբ և նախաստեղծ մարդուն տուած օրհնութեամբ նրանք սկսան օրհնել իւրաքանչիւրի զուգաւորութիւնը՝ — ամուսնական կապը և այնուհետեւ ամուսնացողներին մի միայն մարդը հոգեւոր եղբայրութեան սիրոյ մատչելի և արժանի յայտարարել այլոց համար։ Ահա այս տեղն է եկեղեցական ամուսնութեան հիմունքը և նա երբէք սոսկ ծիսական բան կամ Աւետարանի ու Փրկչի տուած օրինաց հետ որեւէ կապ չունեցող մի խորհուրդ չէ, ինչպէս այդ մասին գրում են երբեմն այս կամ այն փիլիսոփաներ, որոնք երբէք չեն ուրանում քրիստոնէական կրօնի քարոզած բարոյակա-նութեան վեհութիւնն ու դերազանցութիւնը միւս բոլոր կրօնների քարոզածից։ Դեռ առաքեալներից սկսած, երբ եկեղեցին առանձին հանդիսաւորութեամբ և հրապարակա-կան աղօթքով սրբազործեց ամուսնութիւնը և օրհնել սկսեց նոր ամուսնացողներին, երբ հիմք դրեց քրիստոնէական ընտանիքի, որոնք անսահման հաւատարմութեամբ հետզհե-տէ կրքի տիրապետութիւնից դուրս գալ պէտք է ձգտէին, միաժամանակ օրէնքների մշակուեցին այդ ընտանիքի մի-ութեան պաշտպանութեան և յանցաւորներին պատժելու համար և նրանցից յետոյ էլ՝ բաղմաթիւ տիեզերական և ազգային եկեղեցական ժողովներում երբէք ամուսնութիւնը լուծելու որոշումն չեղաւ և այդպիսի դէպք էլ չունին։ Որոշեցին լուծել ամուսնութիւնը մի միայն երկու դէպ-քում՝ ամուսնու տասն և հինգ ամեայ բացակայութիւնից և մէկն ու մէկի անհաւարմութիւնից յետոյ, այն էլ մեծ դժուարութեամբ և մեղաւոր կողմը խիստ ծանր պատժի ենթարկելով։

Ահա ընտանիքի անդամներին վերաբերեալ օրէնքներն առաքեալներից սկսած։

Ա. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.

34դ կանոն.

Ամուսնութիւնը կատարուի օրէնքով և քահանայի օրհնութեամբ...

Բ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.

48. Եթէ աշխարհականը իւր կնոջն արձակի և ուրիշին առնի, կամ արձակուածին, թող մերժուի եկեղեցուց:

67. Ով չնշանուած աղջկան կըռնաբարի, մերժուի եկեղեցուց. ուրիշի հետ պսակուել չի կարող նա, այլ միայն այս աղջկայ հետ, թէ կուզ աղքատ տնից լինի սա:

Անկիւրիայի ժողովի կանոնների մէջ տես կանոն 2դ, 3դ և 9դ.

Նէոյկեսարիայի տեղական ժողովի—(314—315 թ.)— 2դ, 3դ, 4դ, 8դ և 9դ.

Գանգրի տեղական արտաքին ժողովինը—1դ, 9դ, 10դ և 14դ.

Բարսեղ մեծի կանոններից—2դ, 6դ, 7դ, 9դ 12դ.

21. Ամուսնացած մարդը եթէ ուրիշ կնոջ հետ յարաբերութիւն կունենայ, անառակութիւն արած կը համարուի և երկար ապաշխարանքի կենթարկուի: Կինը այդպիսի մարդուն չալիտի արձակի.

Բայց մարդը եթէ անարատ է, մեղանշող կնոջ կարող է արձակել. թէ ինչո՞ւ երկուսի համար հաւասար չէ օրէնքը, չեմ իմանում, սովորութիւնը այդպէս է: Նոյն տեղ 22դ, 23դ.

25դ) Եթէ մէկը պսակից առաջ յարաբերութիւն կունենայ իւր կնոջ հետ, թող ապաշխարանքի ենթարկուի և ապա կենակցի կնոջ հետ.

26դ) Առանց պսակի անառակութեամբ ապրողները բաժանուին՝ եթէ հնար է, եթէ ոչ, թող անառակի պատժին ենթարկուին և ապա ամուսնանան

34դ) Եթէ իրանց խոստովանութեամբ կամ այլ կերպ

յայտնուի, որ կինը շնութիւն է արել, թող հաղորդուի միայն այն ժամանակ, երբ ապաշխարանք կըկրի որոշ ժամանակով:

37դ.) Ուրիշի կնոջ հետ ապրող ամուսնացած մարդը՝ շնութիւն արած կը համարուի և կը մեղադրուի:

39դ.) Շնացողի հետ ապրող կինը շնացող է կենակցութեան բոլոր ժամանակը:

Նոյն սեղ 35դ., 36դ., 38դ., 40դ., 41դ., 42դ., 46դ., 49դ., 50դ.

48դ.) Մարդուց թողնուած կինը, իմ կարծիքով անամուսին պիտի մնայ:

Նոյն սեղ 57դ., 59դ., 62դ., 63, 69դ., 70դ., 71դ., 75դ., 76դ.:

77դ.— Կնոջը թողնողը և ուրիշի հետ ապրողը շնացողի պատժին ենթարկուի:

Նոյն սեղ 78դ., 79դ., 80դ., 87դ., 88դ.:

Վերոյիշեալ բոլոր կանոնների բովանդակութեան մասին մերձաւոր ծանօթութիւն ունենալ ցանկացողը կարող է կարգաւ այն «Հայոց եկեղեցական իրաւունք» կոչուած գրքում՝ Ն. Վ. Մելիք Թանգեանի:

Հետաքրքիր է, թէ մեր ազգային եկեղեցական ժողովներն ինչպէս են հասկացել Քրիստոսադիր օրէնքն ամուսնութեան մասին և ինչպէս են գործադրել այն:

Շահապիւանի ժողովի կանոնները.

Յօդուած 1. 2դ. ա. բ. գ. դ. ե. զ.

3դ. ա. Եթէ ամուսնացած մարդը շնութիւն անի և ամուսնական կարգը սրբութեամբ չը պահի, այդպիսին ենթարկուի խիստ պատժի: Այդպիսի մարդուն գլխաւոր անձինք կշտամբեն օգտակար խօսքերով և ծեծով, եկեղեցուց հեռացնեն և տուգանք առնեն յօգուտ աղքատներին: Եթէ ազատ է, ձեծի փոխարէն տուգանքը շատ առնել ու 2 տարուայ ապաշխարանքի ենթարկել: Եթէ գիւղացի է շատ ծեծ ուտի, 100 դրամ տուգանք տայ և մի տարի ապաշխարի: Նոյն կանոնը լինի թէ մարդու և թէ կնոջ համար:

բ. Եթէ ամուսնութիւնից առաջ մէկը պոռնկութիւն արու կամ իւր նշանածի կամ օտարի հետ, անարդու-
թեան համար տուգանք տայ ինչքան կը պահանջեն աղջկայ
հայրն ու մայրը: Եթէ կամենայ նոյն աղջիկը կնութեան
առնել, առաջ թող երկուսով ապաշխարութեամբ սրբուեն
և ապա ամուսնանան, պսակը լինի ոչ կոյսի, այլ երկակ-
ների—միայն խաչակնքելով: Եթէ պոռնկութիւնը եղել է
աղջկայ կամքով, այն ժամանակ—100 տղան և 50 դրամ
աղջիկը տան եկեղեցուն աղքատներին բաշխելու համար:

դ. Իսկ եթէ մէկը կուսան է, միւսը պոռնկութիւն ա-
րած, կուսանին պսակը օրհնուի օրինաւոր կերպով, իսկ
միւսինը իբրև երկակի—այսինքն խաչակնքել ուռը և դնել
գլխին իբրև նշան թշնամու յաղթութեան:

դ. Եթէ մարդը շնաբարոյ է և ուրիշ կնոջ վրայ աչք
ունի և կարճակի կնոջը, որը որդիների տէր է, առանց
ցանկութեան կամ մարմնոյ արատի, այն ժամանակ նա
պարտաւոր է ամենը բաժանել, կէս անել, որդիները, տունը
հողը, ջուրը կնոջ հետ հաւասար. կինը իրաւունք ունի
մարդու գնալու՝ միայն այս պայմանով, որ բաժինը ար-
քունի գանձարանին տայ: Իսկ մարդը 7 տարի ապաշխարի
և եկեղեցուն տուգանք տայ, թէ ազատէ 300 դրամ, թէ
չինական է՝ ծեծուի և 100 դրամ տուգանք վճարի: Եթէ
ուրիշ կին այս կնաթող մարդուն գայ տարին չը լրացած
և յայտնուի, որ այս կնոջ պատճառով է մարդը առաջին
կնոջն արձակել. երկրորդ կնոջ բռնեն և ուրկանոց տանեն
մի տարի ազալու, եթէ ազատէ, ուրկանոց չի գնալ, 100
դրամ տուգանք տայ եկեղեցուն: Նոյնտեղ յօդուած 5դ.,
6դ., 7դ., 12դ., 13դ., 19դ., 20դ.

Դուինի Բ. Ժողովի կանոնները. յօդ., 24դ., 25դ.

Ե. Ժողով Դուինի յօդուած 16դ.

Լուսաւորչի կանոններ. — Ե. դ. Ը. Թ. Ժա. Ժգ. իգ.

Այսքանս բաւական ենք համարում և առաջ չենք
բերում յիշեալ բոլոր կանոնների բովանդակութիւնը, որով-
հետև վախենում ենք ձանձրացնել ընթերցողներին, այլ
բառացի առաջ կը բերենք ամուսնական խորհուրդը կա-

տարելիս գործածուած մի խրատը, որը պատահամբ գտանք մեր ձեռագիր մաշտոցներից մինում՝ ս. Նախափկայի վանքում և որը հրաշալի պարզում է հայ ժողովրդի և հոգևորականութեան հայեացքը քրիստոնէական եկեղեցական ամուսնութեան մասին։

Ահա այդ խրատը.—

«Օրհնեալ է Աստուած յամենայն ժամ, Փեսային և հարսին խրատ և քարոզ վասն ձեր եղբայրք, ի միտ առէք և ի վեր կալէք, լսեցէք և ի միտ պահեցէք առաջի Աստուծոյ և առաջի ժողովրդեանս և առաջի քահանայիցս, զինչ որ հրամանքն է և օրէնքն, որ ի մէջ մարդոյ և կնոջ կայ, այսօր ձեզ յայտնի կանեմ, քանի որ դուք կենդանի էք, պէտք է որ պահէք եթէ իմիտ առնէք, Աստուծոյ օրհնած ծառայք լինիք, պատուիրանաց պահող և հրամանացն կատարող, յայնժամ օրհնած պատու լինիք և արքայութեանն ժառանգորդք, Ապա թէ չպահէք ի միտս ձեր, ես իմ պարտքն վճարեցի, որ ձեզ ճշմարիտն ասացի, դուք դիտէք ու Քրիստոս, ձեր մեղաց պատասխանն դուք տուէք, իմ այլ մեղ չկայ, և Աստուծոյ օրէնքն այս է, Առաջինն այս է, որ աստուածագիր սահման է, տարին կէսը պահէ և կէսը ուտիք, ի պահոցն զանկողին ձեր սուրբ պահեցէք, հրամանք չկայ ի պահոցն, որ յանկողինս մերձենան։ Որպէս արգելումն է ի մտոյ և այլ ուտեաց կերակրոյ, նոյնպէս արգելումն է յանկողնոյն, քրիստոնեայն այն է, որ պահոցն անկողնէն հեռի կենայ և թէ չկենան, այն թուրքի կարգին է։

Երկրորդն այն է, եղբայրք, որ աշխարհիս զինչ կինարմատ որ կայ, յայն ամենայնէ քեզ բաժին այդ մէկը ընկաւ, այտից ի զատ ինչ կին որ կայ, ամեն քո մայրէ և քոյր և սանամայր, Քանի որ այդ մինդ կենդանի է, քեզ այլ ճար չկայ, քո կինն այդ է։ Եթէ աւելիք առնես և լրբութեամբ օտար կնոջ թամահ առնես, հետ ի քո մօրն և հետ ի քո քվերն և հետ ի քո սանամօրն լինիս մեղանշած։ Եւ դու լսէ, հարսն, որ յաշխարհիս լաւ ազատ մարդ չատ կայ և ապա քեզ բաժին այդ մինդ հասաւ, այդից

ի զատ ամեն քո հայր է և քո եղբայր և քո որդեգիր. և եթէ լրութեամբ յառնես ի հետ օտար մարդկանց, հետ քո հօրն և քո եղբօրն, քո որդեգրին լինիս մեղանշած: Քանի որ կենդանի էք, այլ կողմանց ճար չկայ: Ապա թէ մինն մեռանի, մէկն էլ հասնի:

Երրորդն այն է, որ երբ կինն յղանայ, որ զաւակն անկանի յարգանդն, մինչ որ ծնանի, 40 օր չանցանի, ճար չկայ, որ մարդն իւր յանկողինն մերձենայ, ապա թէ լրբութիւն առնես, հետ քր զաւակին լինիս մեղանշեալ: Այլ համբերել պիտի, որ Աստուծոյ հրամանք է, որ զաւակը ծնուի, 40 օր անցնի, որ օրէնքն կատարի: Լաւ դիտացիր եղբայր, որ Աստուծոյ բանն դժուար է. հաղիր կացիր, որ Աստուած բարկանայ ոչ և դու կարճ օրանցիկ լինիս:

Չորրորդ բանն այն է, որ ամեն լուսնում կնոջ ցաւ կը հանդիպի, դուք ձեռնախափան կասէք և գիրքն լուսնացաւ կասէ. քանի որ կինն այն ցաւումն է, պիղծէ և մարդը չը պէտք է պղծին մերձենայ: Եթէ այն ցաւումն մերձենայ, ծնունդն գոգի լինի և պիտակոտ և գիւահար և աղգի աղգի ցաւօք: Ապա լաւ կենալ պիտի, որ կնոջ ցաւն փարատի և լուացուի և ապա մերձենայ:

Հինգերորդ այն է, եղբայր, որ ամեն բանի վերջ կայ և այս բանիս էլ կայ վերջ. մինչև ի մահն մեղօք չը պիտի կենալ: Այլ Աստուծոյ հրամանն այն է, որ քանի կինը ծննդաբեր է և աճումն ունի, բերքի և սպաղաթիէ, պարտէ ի կինն մերձենալ: Եթէ ծնունդն խափանի և աճումն չլինի, այդ գործն աճման համար է ստեղծեալ Աստուած, երբ աճումն խափանեցաւ, գործն ալ խափանեցաւ: Ապա երթան ի դուռն եկեղեցւոյն և քահանայի ձեռօքն ուխտ դնեն Աստուծոյ, որ կին ու մարդ չլինին և մի տեղ կենան և զիրար թաղեն. սրբութեամբ և արդարութեամբ կենան, և այս է քրիստոնէից օրէնքն, որ Աստուած հրամայեալ է:

Չայս որ ասացի, թէ Աստուծոյ օրէնքն այս է, լսեցէք և ի միտ պահեցէք, որ ես այլ լինեմ Աստուծոյ սլարդերես, որ ուսար, և այսով կը տեսնէք զԱստուած և զար-

քայութիւնն իւր։ Թէ չլսէք և չը պահէք, ես տղատեցայ իմ պարտուցս. Աստուած ձեր մեղքն ինձնէ չխնդրէ։

Այլ բան էլ կայ. լաւ գիտացիր եղբայր, որ մինչև ի մահ ձեր պարտքն է։

Այսօր դուք երկուսդ՝ հարսդ ու փեսայդ անպատճառ էք և անփոյթ և անպակաս, քանի որ առողջ էք և խաղաղութեամբ հաւան էք միմեանց։ Ապա աշխարհիս վրայ փոփոխութիւն կլինի. — խաղաղութիւնն խռովութեան կը փոխուի, կենդանութիւնն իմահ։ Քեզ ասեմ, փեսայ, հարսի խղճին տէր ես մինչև իմահն, և հարս փեսայիդ մինչև իմահն։ Այսօր առողջ էք և խաղաղութեամբ հաւանէք մէկ մէկի. ապա յետոյ թէ հիւանդութիւն հանդիպի, թէ աղքատութիւն, թէ դերութիւն, թէ սով, թէ փախուստ, թէ դիւահարութիւն, թէ կաղութիւն, թէ կուրութիւն, թէ կոնդութիւն, թէ զինչ ցաւ որ կայ աշխարհիս մինչև ի մահն, որ է պայման գերեզմանին, դուք մէկ մէկի խղճի և արիւնի տէր էք, փեսայ ու հարսն, ամենայն ցաւի տէր էք մինչև իմահն, թէ սով, թէ դերութիւն, թէ փախուստ, թէ զինչ որ հանդիպի՝ եկեղեցւոյս վկայութեամբն, (ՓԲ) տառներկու մակարովս, մէկ մէկի խղճի և արիւնի տէր էք, ամէն։

Օրհնեալ է Աստուած, պսակին էութիւնն և հաւանումն այն է, երբ լսածն կատարէք։ Որով օրհնութիւնն Աստուծոյ հանդի ի վերայ ձեր։ Զինէհար, զինէհար, զինչ որ Աստուծոյ հրամանքն է, կատարեցէք և Քրիստոսի մարգասիրին վայելէ փառք...»

Վերև առաջ բերած եկեղեցական կանոններից՝ աւաքելոց ժամանակներից սկսած և վերջին անպաճոյճ և պարզ, թէև կիսազրադէտ հոգևորականի ձեռքով մաշտոցի մէջ մտցրած պսակի խրատից պարզ երևում է, թէ ինչպէս էր հասկացւում քրիստոնէական եկեղեցւոյ պսակը, ամուսնացողների պարտականութիւնները դէպ իրար, դէպի հասարակութիւն և բոլոր մարդիկ առհասարակ։ Ինչ պարտականութիւններ էին իրենց վրայ առնում ամուսնացողները և նրանց վրայ հսկող օրէնքն ու եկեղեցին։

Անցան տարիներ. Աւետարանի սկզբունքները եկեղեցուց ու դպրոցից սկսած՝ անյայտ մնացին, ծածկուեցին ժողովրդի աչքից, նա մի միայն անհասկանալի ծէս լսեց հոգևորականի բերանից, մի միայն ծխապաշտութեան և ծխական քրիստոնէութեան շնորհիւ թուլացաւ հաւատը մարդկանց մէջ և բնաւորութեան ոյժը՝ մանաւանդ ողջախոհութեան մէջ՝ տեղի տուաւ. լսուեց կրքի քարոզը, մարմնի պարարտացման և փոփկացման հոգսը առաջին տեղը բռնեց, դրան միացան հազար օւմի գրգռիչ պատճառներ և միջոցներ, թուլացաւ օրէնքի և խղճի հսկողութիւնը, առաջ եկան տնտեսական նորանոր պահանջներ և խնդիրներ և ահա մենք այդ բոլորի շնորհիւ ականատես Վիպ ենք մեր նահապետական սուրբ ամբոցի՝ ընտանեկան միութեան քայքայման, առանց քննել և չափել կարողանալու նրա հետեւանքներ:

Ի՞նչ հայացքներ կան մեր ժամանակում եկեղեցական ամուսնութեան, ընտանեկան կապի անխզելիութեան և ընտանիքի անդամների բարոյականութեան մասին. ինչ ճանապարհով մարդիկ յոյս ունեն իրականացնելու մաքուր և ուժեղ ընտանիքի բարոյականն ու գաղափարը, իսկապէս որոնք պէտք է համարուեն և են իսկական բուժիչ միջոցները, կաշխատենք յառաջ բերել հետեւեալ անգամ:

Ե. Տ. Վ. Մ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Այս տարի սովորական հանգիստւորութեամբ կատարուեցին սրբոց կուսանանց տօները Հռիփսիմէի, Գայանէի և Շողակաթի վանքերում: Ազգիս Վեհափառ Հայրապետը կարողացաւ ներկայ գտնուիլ կուսանանց տօնին Ս. Հռիփսիմէի վանքում, որը շատ վայելուչ նորոգուած է թէ դրսից և թէ ներսից: Յանկալի է, որ բարեգործ